## Արձանագրություն 2
## «Գյումրու շտապ բուժ օգնության կայան» ՓԲԸ կարիքների համար «ԳՇԲՕԿ-ԳՀԱՊՁԲ-19/6» ծածկագրով գնանշման հարցման ընթացակարգի գնահատող հանձնաժողովի հայտերի բացման նիստի

Գնահատող հանձնաժողովի նիստը տեղի ունեցավ 29.11.2019թ. ժամը 09:30-ին /էլեկտրոնային գնումների www.armeps.am կայքի միջոցով:

Մասնակցում էին՝

**Հանձնաժողովի նախագահ**
**Մ. Մանուկյան** -«Գյումրու շտապ բուժական օգնության կայան» ՓԲԸ-ի դեղագործ
**Անդամներ**
**Ա. Խաչատրյան**-«Գյումրու շտապ բուժական օգնության կայան» ՓԲԸ-ի ավտոպարկի վարիչ
**Ն. Գեվորգյան** -«Գյումրու շտապ բուժական օգնության կայան» ՓԲԸ-ի տնտեսվար

**Հ. Թորոսյան**-«Գյումրու շտապ բուժական օգնության կայան» ՓԲԸ-ի համակարգչային օպերատոր

**Գ.Թադեվոսյան**- Գյումրու շտապ բուժական օգնության կայան» ՓԲԸ-ի հաշվապահ

Քարտուղար-գնումների համակարգող
**Գ. Պետրոսյան**- «Գյումրու շտապ բուժ օգնության կայան» ՓԲԸ-ի գնումների համակարգող

### 1. Տեղեկություններ հայտերի բացման մասին

**(Մ. Մանուկյան )**

Հայտերը բացվել են էլեկտրոնային գնումների www.armeps.am կայքի միջոցով՝ հրավերի հրապարակվելու օրվան հաջորդող 7-րդ օրը՝ 29.11.2019. ժամը 09:30-ին, որը համընկել է հայտերը ներկայացնելու վերջնաժամկետին:
**Ընդունվել է որոշում՝ կողմ - 5, դեմ – 0**

### 2. Հայտեր ներկայացրած մասնակիցների անունները և գտնվելու վայրի հասցեների մասին

---

**(Մ. Մանուկյան )**

«Գյումրու շտապ բուժ օգնության կայան» ՓԲԸ-ի կողմից էլեկտրոնային եղանակով կազմակերպված ԳՇԲՕԿ-ԳՀԱՊՁԲ-19/6 ծածկագրով գնման ընթացակարգին հայտ է ներկայացրել 4 մասնակից.

| հ/հ | Մասնակցի անվանումը | Տվյալները |
|---|---|---|
| 1 | «Արֆարմացիա» ՓԲԸ | ՀՎՀՀ 02505735 Հասցե՝ք.Երեվան Րաֆֆու 11 հեռ 060 75-99-99 էլ փոստ tender@arpharm.am |
| 2 | «Լեյկո» ՍՊԸ | ՀՎՀՀ 01224924 Հասցե՝ք.Երեվան Ֆուչիկի 27/14 հեռ 010 35-03-03 էլ փոստ leykoalex@gmail.com |
| 3 | «Հերմո-ֆարմ» ՍՊԸ | ՀՎՀՀ05522575 էլ փոստ hloyanh@mail.ru |
| 4 | «Նատալի ֆարմ» ՍՊԸ | ՀՎՀՀ 01222567 Հասցե՝ք.Երեվան Տիչինա 3-րդ նրբ 2/2 հեռ 010 744-212 էլ փոստ natalipharm@bk.ru |

**Ընդունվել է որոշում՝ կողմ - 5, դեմ – 0**

### 3. Հայտերը էլեկտրոնային ձևով կազմման և ներկայացման՝ հրավերի պահանջներին համապատասխանության վերաբերյալ տեղեկություններ

(Մ. Մանուկյան )

**3.1** Բոլոր մասնակիցների կողմից բացի «Հերմո-ֆարմ» ՍՊԸ-ից էլեկտրոնային ձևով ներկայացված փաթեթները կազմված էին հրավերով սահմանված պահանջներին համապատասխան:

**3.2 «**Հերմո-ֆարմ» ՍՊԸ-ի կողմից ներկայացված փաստաթղթերը կազմված են հրավերի պահանջներին ոչ համարժեք

**Ընդունվել է որոշում՝ կողմ - 5, դեմ – 0**

**4. Տվյալներ հարցումների եվ պարզաբանումների մասին**

(Մ. Մանուկյան )

Հայտերի վերաբերյալ հարցումներ եվ պարզաբանումներ չեն եղել

**Ընդունվել է որոշում՝ կողմ - 5, դեմ – 0**

**5. Մասնակիցների առաջարկած գները**

(Մ. Մանուկյան )

Մասնակիցների ներկայացված գների ըստ հավելված 1-ի

1-ին չափաբաժնի մասով «Նատալի ֆարմ» ՍՊԸ-ի ներկայացված գինը բարձր է նախահաշվային գնից:

2-րդ չափաբաժնի մասով «Լեյկո» ՍՊԸ-ի եվ «Նատալի ֆարմ» ՍՊԸ-ի ներկայացված գները բարձր են նախահաշվային գնից:

5-րդ չափաբաժնի մասով «Լեյոկ» ՍՊԸ-ի ներկայացված գինը բարձր է նախահաշվային գնից:

8-րդ չափաբաժնի մասով «Լեյկո» ՍՊԸ-ի եվ «Աֆարմացիա» ՓԲԸ-ի ներկայացված գները բարձր է նախահաշվային գնից:

10- րդ չափաբաժնի մասով «Լեյկո» ՍՊԸ-ի եվ «Նատալի ֆարմ» ՍՊԸ-ի ներկայացված գները բարձր են նախահաշվային գնից:

**Ընդունվել է որոշում՝ կողմ- 5, դեմ – 0**

**6. Գնումների մասին ՀՀ օրենսդրության պահանջների համաձայն հանձնաժողովը որոշեց**

(Մ. Մանուկյան )

ա) ղեկավարվելով ՀՀ Կառավարության 04.05.2017թ. թիվ 526-Ն որոշմամբ հաստատված «Գնումների կազմակերպման կարգի» 40-րդ կետի 5-րդ ենթակետի պահանջներով, հանձնաժողովի նիստը կասեցնել և էլեկտրոնային ձևով ծանուցել մասնակիցներին նշված չափաբաժինների մասով գնի նվազեցման շուրջ բանակցություն- ների:

բ) ղեկավարվելով ՀՀ Կառավարության 04.05.2017թ. թիվ 526-Ն որոշմամբ հաստատված «Գնումների կազմակերպման կարգի» 40-րդ կետի 4-րդ ենթակետի պահանջներով «Հերմո-ֆարմ» ՍՊԸ-ի հայտ մերժել:

**Ընդունվել է որոշում՝ կողմ - 5, դեմ – 0**

## 7. Հանձնաժողովի հաջորդ նիստի անցկացման օրը,ժամը եվ վայրը

(Մ. Մանուկյան )

7.1« ԳՇԲՕԿ-ԳՀԱՊՁԲ-19/6» ծածկագրով ընթացակարգի գնահատման նպատակով հանձնաժողովի նիստ հրավիրել 2019թ. դեկտեմբերի 05-ին, ժամը 10:00-ին «Գյումրու շտապ բուժ օգնության կայան» ՓԲԸ-ի շենքում, հասցեն՝ ք.Գյումրի Մազմանյան 3բ հասցեում: Ընդունվել է որոշում՝ կողմ - 5, դեմ – 0

Գնահատող հանձնաժողովի նախագահ՝ ________________ Մ.Մանուկյան

Հանձնաժողովի անդամներ՝ ________________ Ա.Խաչատրյան

________________ Ն. Գեվորգյան

________________ Գ.Թադևոսյան

________________ Հ. Թորոսյան

Քարտուղար՝ ________________ Գ. Պետրոսյան